ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի տարեկան ծրագրով հաստատված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի հաշվեքննության շրջանակներում իրականացվող աշխատանքներով:

Վերոնշյալ հաշվեքննությունն իրականացնելու համար վարչությանն անհրաժեշտ է համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող փորձագետ:

II. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինը ամիսների և տարեկան կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության հաշվեքննություն:

III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

3. Պայմանագիրը կնքելու պահից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4. Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է վերջինիս մասնակցությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի հաշվեքննությանը:

V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը:

VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. Աշխատանքների գնահատման չափանիշ է հանդիսանում գործող օրենսդրությանը համապատասխան հաշվեքննվող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրության իրականացումը:

VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Փորձագետն իր իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածների իրավակարգավորումների:

Հարցազրույցին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի

(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 25.06.2020թ.

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

ք. Երևան, Բաղրամյան 19, ՀՀ հաշվեքննիչ պալատ

հեռ. 011-888-145, էլ.փոստ՝ kadrer@armsai.am:

Հարցազրույցին անհրաժեշտ է ներկայանալ անձը հավաստող փաստաթղթով և ներկայացված փաստաթղթերի բնօրինակներով: